

էր մասամբ բաւականացուցիչ կերպով լուծել խնդիրը», վերջացում է ռուս թերթը:

Մենք կը համարձակվենք հարցնել ռուս լրագրից, ինչի Ռուսաստանում, որտեղ զէ մասով օնէր կան, նրանք անգոր են սովի երեւալուն և օրից օր սաստկանալուն առաջն առնել:

Այդ այն պատճառով է որ զէ մասովն թէ հացի թանգութեան և թէ մանաւանդ սովի յայտնվելու ժամանակ կարող է նոյնքան և ոչ սուելի անել բան թէ մասնաւոր ինքիցիատիւից դրդված բարեգործութիւնը, այսինքն միմիայն ժամանակաւորապէս դեղ անել և ոչ թէ արմատական դարման անել ցաւին ու հիմնական վերանորոգութիւն գործել մի հասարակութեան ամբողջ, ինքն ըստ ինքեան սխալ տնտեսական կազմակերպութեան մէջ:

Ահասարակ որ սով չը լինի մի հասարակութեան մէջ, պէտք է ոչ թէ սովի յայտնվելուն պէս սովին առաջն առնել, այլ պէտք է առաջուց այնպէս անել որ սով չը կարողանայ յայտնվել, եթէ հացի պաշարը մի օր թանգանայ: Իսկ երբ արդէն յայտնվեցաւ, եթէ դրուստն ուղում էք իմանալ, բոլոր միջոցները պալի աւտիւ, առ երես միջոցներ են:

Արշական (աղմինխտրատիւ)

միջոցներով թէ կուզ զէ մասովն կամ ուրիշը լինի առաջարկված վարչական հիմնարկութիւնը, հացի թանգութեան և սովի պէս ցաւի դէմ, որուն իր խոր արմատներ մի երկրի է կոնսմիական կազմակերպութեան մէջ—ոչինչ, կամ նոյնքան կարելի է անել, որքան և բոլոր միւս ժամանակաւոր միջոցներով:

Իսկ տնտեսական մշտական ամբողջ կարգը փոխելու համար, հարկաւոր է որ արդիւն աւելնի անձնական շահասիրութեան, որի տեսակներն են՝ չարչիութիւն, ափերիստութիւն, հարստահարութիւն և այլն....

Դորա համար հարկաւոր է վտանգի յայտնվելուց շատ առաջ գործել, դրդելով երկրի արդիւնաբերող ոյժերը ինքնուրոյն կերպով գործելու, զանազան հարստահարող ոյժերի անտանելի և կործանիչ լուծից ազատվելու համար:

Այդ մենք մեր կարողութեան չափ միշտ արել ենք, տարիներով բարոգելով արդիւնաբերող ընկերութիւններ, փոխատու ընկերութիւններ, դիւղական կրեստ.... Արդեօք եւրօպական Ռուսաստանի զէ մասովները լուրջ կերպով այդ մասին որ և է ժամանակ հոգացել են.... Այն նրանք միջոցներ պաշտօնական, վարչական

հիմնարկութիւններ, ժողովրդի կարիքը չը ճանաչող կազմակերպութիւններ....

Իսկ ումից են բաղկացած զէ մասովները,—նոյն իսկ ժողովրդի ներկայացուցիչները:

Որտեղ նոյն իսկ ժողովուրդը իր տնտեսական ամենաանհրաժեշտ պահանջների մէջ չունի ոչինչ ինքիցիատիւ, այնտեղ ոչինչ չի օգնի մի հիմնարկութիւն, որ կազմակերպված է զէպի իր ամենաանհրաժեշտ շահերը անհոգ մնացող նոյն ժողովրդի ընտրեալները:

Իսկ թէ մենք տարիներով բարոգել ենք կամ չենք բարոգել այն ձևի տնտեսական հիմնարկութիւնների իրագործելը, որոնց վերելիչները,—այդ մասին թող «Օժօր» լրագիրը ներդրիւն քաշի թերթիւ «Մշակի» անցեալ տարիների համարները:

«Օժօր» լրագրի յօդուածը դիպչում էր թէ մեզ և թէ «Труд. Вѣстн.» լրագրին: Այդ վերջինի պատասխանից բաղում ենք հետեւեալ ուշադրութեան արժանի տողերը:

«Ասենք թէ զէ մասովի բոլոր բաղմաթիւ գործողութիւնները աջողութեամբ են կատարվում,—բայց ի՞նչ պէտք է անենք մինչև որ այդ հիմնարկութիւնը կը մոցնի իր

մեզ մօտ.... Այդպէս կուլթիւնը թող կորչի, թող աղաղակի օրական օգնութեան մասին, թող նա այս օր ոչինչ չը ստանայ, չունենայ մի կտոր հաց անգամ,—մինչև որ «Օժօր» լրագրի ջանքերով մենք կունենանք մեր երկրում զէ մասովի հիմնարկութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԴԵՐԲԵՆԻՒՅ

Յունվարի 14-ին

Դերբէնդի թէ ընդ և թէ օտարական հայրիկանայք կարելի է երկու հակապատկեր դասերի բաժանել. առաջին դասը կազմող զլիսաւորապէս տէրութեան պաշտօնատարների կանայք են, իսկ երկրորդ ամենամեծ դասը հասարակ ժողովրդական: Առաջինները փոքր ի շատէ կը լինեն լինելով, վայելում են կեանքի այն ամենայն զուարճութիւնները, որ կարելի է, գտնել այսպիսի մի կըզդիացեալ քաղաքի մէջ, ինչպէս Դերբէնդն է: Նրանց առաջ բաց է կուրը, թատրօնը, գիմապահողէսը, քաղաքային պարտիզի դրօսանքները, և այլն և այլն. մինչդեռ հասարակութեան մեծամասնութիւնը զուրկ է այս ամենից: Նա նահապետական ամբթխածութեամբ փակված է դեռ իր տանը, նրա միակ զբօսատեղին ազգակցի տունն է, կամ շատ շատ այգիները. այդ անձուկ չըլանի մէջ ի հարկէ ինչ պէտք է լինի նրա մօտաւոր կարողութեան մոտենը, եթէ ոչ հայկական գէշ սովորութիւնները՝ բամբասանք, ծաղր, զրպարտութիւն և այլն: Այսպիսի անմիթթար դրօսութեան մէջ եթէ կը նրա մի օրինակ կեանքի մէջ մի փոփոխութիւն ձգող երևոյթ, այդ երբեմն երբեմն սիրողներ ներկայացումներն են, որոնք դժբաղդաբար երկու երեք տարին մի անգամ հազու են զուրկ զալիս:

Իր, ճակնդեղի (բանջար կամ ճարխալ, сѣнокосилка) վրա յայտնված առանձին առանձին թրթրութիւններ ու բզէզներ և վերջապէս դաշտային նահանգներում ցորենի ցանքերի վրա յայտնված ցորենի-բզէզը, Այդ տեսակ երևոյթներ կը լինեն վրում են զանազան կողմերում և ընդհանրապէս այնտեղ, ուր զլիսաւորապէս մի օր և ինչ բոլոր մշակութեամբ են զբաղվում, նշանաւոր տարածութիւնների վրա:

Այս այս իրողութիւնների յայտնվելու ռուս դիւղատնտեսագէտներին մտածել տուաւ, որ ցորենի բզէզի դէմ մաքառելու համար զլիսաւոր պայմանը պէտք է այն լինի, որ նոքա անբարեպաշտ պայմանների մէջ զնվին իրանց լաւողապէս գործակալու վերաբերութեամբ, այսինքն նրան պէտք է զրկել իրենց բնութեան համապատասխան կերակրից: Բայց թէ արանց չը պէտք է եղալանք որ հարկաւոր է ցորենի մշակութիւնից բոլորովին ձեռք վեր առնել, երբէք ոչ, որ այն հարկաւոր է ցանքերը փոփոխել, և չէ թշուրեւակ տարեցտարի մի և նոյն բոյսը մշակել: Anisoplia austriaca բզէզի կերպարանափոխութիւնները պատմուց, ասացինք որ սերմերի զուրս եկած որդիներ ամբողջ երկրորդ տարի նորա հետեւեալ տարին բզէզի փոխվելով սկսում են ուտել արտերը, ուտի և ցորեն ցանքի պէտք է հրաժարվել միայն այն տարին, երբ Anisoplia austriaca բզէզի վիճակի մէջ էր լինել: այդ ժամանակ ցորենի փոխարէն կարելի է ուրիշ փոխարէն կը լինի կարելի է նորէն ցորենի մշակութեան վերադառնալ: Ահասարակ ցորենի բզէզի դէմ մաքառելու ամենայնաւոր միջոցը յայտնված է ցանքի պարտ ու պատշաճ փոփոխութեան մէջ, որ երկրագործութեան համար իր ընդ օգուտները և ունի:

Ս. Մ.

իր ճանապարհին հանդիպած կերը՝ առաջ սէզը, իսկ յետոյ և հացահատիկները: Եթէ բզէզի յայտնվածն ենթադրված հացարդայների հատիկը պընդած է լինում և բզէզի ատամներին տեղի չէ տալիս, այն ժամանակ նա հասկի մէջ քրքրելով դեպի թափում հատիկները: Anisoplia կերակրվում է բոլոր հասկաւոր հացահատիկներով, բացի եգիպտացորենից, վարսակից և կորեկից, չէ ուտում և իւղաւոր բոյսերը, արմատապտուղները, սեռա ցորենը, պատիճաւոր բոյսերը: Հացարդայների վրա յարձակվելով՝ բզէզը ծծում է ձևակերպվող հատիկի հիւթը:

Բզէզները սննդվելուց յետոյ զուգաւորվում են և դրանից յետոյ արուն սատկում է, իսկ էզը փորելով գետինը մտնում է այնտեղ, սերմեր ածում ու նոյնպէս սատկում, Հացի բզէզների սերմերը կողպած և կամ երկայնաձև են լինում, սպիտակ գոյնով և հասնում են մինչ կորեկի կամ կանեփի հատիկի մեծութեան: Սերմերը առաւել լաւ զարգանում են չափաւոր խոնավ հողի մէջ, իսկ չոր գետնում նորա փչանում են: Ածած սերմերից աշնան մօտեցրում դուրս են գալիս որդեր (личинки): Որդիների մարմինը 12 օղակներից է բաղկացած լինում:

Հացակեր բզէզների որդիներ սերմերից դուրս գալուց քիչ չարժանան են լինում, բայց յետոյ խիստ արագաշարժ են դառնում, հեշտութեամբ և շուտով փորելով փխրուն հողի մէջն են մտնում և լաւ սողում են: Հողի մէջ մտնելով որդը իր համար մի խոր է չինում, որի մէջ և կամաւորաձև թեքուելով գետնից վրում է, այդ խորի չըլալ պատճառով հողն էլ պնդելով կոկոնի պէս մի բան է կազմում: Հողի յատկութեան, տարալի պատճառներով, եղանակի վիճակին նայած՝ որդիներ խորվում են հողի մէջ քիչ կամ շատ. փխրուն հողի մէջ նոքա հեշտութեամբ են խորվում և աւելի խոր էլ են խորվում, քան կոշտ հողի մէջ, երաշտութեան ժամանակ. նոյնպէս աշնան և ձմեռը որդիներ աւելի խոր են լինում, քան գարնան և ամառը խոնավ եղանակում: Գորակեր բզէզի որդը մնում է հողի մէջ բոյսերի փառածով կերակրվելով, այդպէս անց է կացնում ամբողջ երկ-

րորդ տարին և միայն հետեւեալ տարվայ գարնան փոխվում է պաճուճապատի, որը սկզբում սպիտակագոյն է լինում, իսկ ծերութեան հասնելուց գորշ-դեղին է դառնում: Այդ վիճակի մէջ բզէզը կենում է երկու կամ երեք շաբաթ՝ և այնուհետեւ բզէզի է փոխվում: Բզէզի փոխվելուց մի առ ժամանակ էլ հենց հողի մէջն է մնում, բայց և վերջապէս երես դուրս գալուց էլ մի քանի օր մնում է հանգիստ, կարծես իր ոյժը ժողովելու համար:

Բ.

Anisoplia austriaca բզէզի հասուցած չարթը յայտնվելուց և նրա կեանքի նկարագրութիւնը փոքր ինչ մտնեալով ընկուց յետոյ մի կարճաւոր կերպով էլ ցոյց տանք թէ Ռուսաստանում ինչ միջոցներ են գործ դնում այդ բզէզից ազատվելու համար: Այնտեղ բոլորն էլ այն կարծիքի են, սկզբում, որ պէտք է աշխատել բզէզների ցեղը քննել նորանց կոտորելով և այդ նպատակի համար շատ տեսակ բզէզ որսալու մեքենաներ հնարվեցան անցեալ 1878 թուականում մէկը միւսից աւել կամ պակաս անյարմար: Մինչև այժմ այդ մեքենաներից չը տեսնվեցաւ այն օգուտը որ սպասվում էր նրանցից, որովհետեւ շատ անգամ նրանցով աւելի վնասում էին արտերին, քան թէ որքան բզէզ էին որսում: Այնու ամենայնիւ դրանց վերջնական արդիւնքը կերակայ առաջիկայ 1880 թուականին, երբ բզէզների թիւը միլիարդներով է սպասվում: Կարծիք չը կայ որ բացի մեքենայով որսալուց ձեռով էլ հաւանում էին բզէզները, բայց շատ պարզ հասկանալի է, որ այդ միջոցներով ոչինչ չէ կարելի յառաջանել միլիոնաւոր բզէզների դէմ: Բզէզներին այդպէս մեքենայաբար կոտորելու համար հնարած միջոցների հետ մի ուրիշ խնդիր էլ ծագեցաւ նրանց բնականաբար կոտորելու համար: Պրօֆեսոր Մեյնիկով հնարք և միջոց սկսեց որոնել ցորենի բզէզների վրա օտարաբոյս-միջատների (паразиты) պատուաստելով՝ հիւանդութիւն գցել նրանց մէջ, որով ինքեանք կոտորուէին առանց մի օր և ինչ աշխատութեան մարդու կողմանէ, և թէն նա իր

փորձերով ապացուցից օր այդ բանը հնարաւոր է, բայց թէ դեռ ևս դրանից էլ մի այնպէս արդիւնք չէ երևացել և նոյնպէս ապագան կարող է ցոյց տալ այդ կղանակի օգուտակար կամ անօգուտ լինելը: Այս յիշատ միջոցներից փոքր ինչ առաւել յուսալի է այն կղանակը, որով առաջարկում են բզէզները կոտորել սերմի և որդի դրութեան միջոցներում, այդ բանին հասնել կարելի է հողը պատշաճաւոր կերպով հերկելով և բազմիցս նորան չըլելով:

Գ.

Բզէզների դէմ մաքառելու միջոցների վրա մեծ տածելով, ռուս գիւղատնտեսագէտները հասան ի վերջոյ մի խիստ կարեւոր եղալագութեան, որ բոլորովին ուրիշ պայմանների մէջ դրաւ բզէզների ցեղը սպառելու խնդիրը և որի վրա մենք կը հրաւիրենք մեր գիւղատնտեսների խորին ուշադրութիւնը:

Ամբողջ դարիկից յետոյ փորձերը ապացուցից են որ երկար միջոցով մի և նոյն տեղում և նշանաւոր տարածութեան վրա մի և նոյն տեսակ բոյսի մշակութիւնը բարենպաստում է այն տեսակ միջատների զարգացման, որոց համար նոյն բոյսը կերակուր է կազմում: Սխալ կը լինի ենթադրել թէ միջոցը քաղցածութիւնից ստիպված իր բնութեան համապատասխան կերակուր չը գտնելով կը սկսէր ուրիշ բոյսերով կերակրվել: միջոցը, ինչպէս և ամենայն մի կենդանի, անբնական կերակրով յաջողապէս զարգանալ չէ կարող: Իրաւ է նա մի առ ժամանակ կը շարունակէ իր պոյութիւնը, լարելով իր ոյժերը գոյութեան համար կուրմէջ, բայց այդ կուրմէջ նորա համար իզուր չի անցնի: Նա կը տկարանայ, կը նիւարանայ և վերջ ի վերջոյ կը չըբանայ: Թէ շատ բոյսերի յատկ են առանձին առանձին օտարաբոյս-միջատներ—գորան կարող են ապացուց լինել Ամերիկայում գետնախնձորի վրա երևացած բզէզ-կօրօրագոն, արևմտեան Եւրօպայում խաղողի տունկերի վրա յայտնված ֆիլոփտերները, Ռուսաստանի շատ կողմերում վուշի (կոտաւահատ, лещ), արևածագ-

Այս մօտ օրերս Գէրբէնը արժանացաւ մի հա-
յերէն ներկայացում տեսնելու. պ. Յակովբ Ա.
Գալատեանի յորդորանքով ու առաջնորդութեամբ
մի խումբ կազմակերպեց և զեկտեմբերի 21-ին ներկա-
յացրին յօգուտ Մարիամեան օրիորդական դպրո-
ցին զառթարական և զօթկան Պետրովիչ պիեսա-
ները: Հասարակութեան մեծ մասը ներկայ էր.
պէտք է ճշմարիտ խոստովանել, որ Գէրբէնը
չափ քիչ անգամ էր այսպիսի յանդի ներկայացում
տեսած. ներկայ կողմ ռուսներին անգամ նա շատ
քաղցր տպագորութիւն է տրել, իսկ հայերի բն-
քանից դեռ մինչև այսօր համը չէ գնացել: Մեծ
գովութեան և շնորհակալութեան արժանի են
տիկին Սառաջեանց, տիկին իշխանեանց, Որ.
Նունէ Մաղաթեանց, Սառաջեան երկու օրիորդ-
ները, օր. Նիկիտաքէթ Գրիգորեանց, պարոն Անտոն
Մելիք Գաղաթեանց, պ. Գասպար Ամիրեան, Ար-
շակ Շահնազարեանց, Անանիա Եղաւթեանց և
այլք առհասարակ, որոնք շատ ընտիր խաղացին
իրենց դերերը: Ներկայացումից զուրացած զուտ
աղդիւնքը 100 ռուբլի 50 կօպէկ է:

Յուսով ենք որ սիրողների այս խումբը հասա-
րակութեան ղեկի թափածոն ունեցած համակրու-
թիւնը տեսնելով, չի զրանայ մի քանի անգամ
ներկայացումներ տալու և կաշխատէ հայկական
բնմի հիմքը դնելու մի առանձին յարմար տեղ:
Այնպէս որ ժողովրդեան ամեն դասակարգին մեր
ձեռնադր լինի: Այն ժամանակ կարծեմ մեծ զարկ
տուած կը լինի ժողովրդի ընտանեկան և հասա-
րական կրթութիւն:

Գէրբէնը

ՆԱՄԱԿ ԵՈՒՇՈՒՅ

24 յունվարի

Ներեցէք, պատեւելի ընթերցող, որ այս նոր
տարվայ սկզբում ինձանից փոխանակ ուրախ
լուրեր լսելու, պիտի ձեր գուրջը շարժեմ, պիտի
ձեզ ևս մեր մտատանջութեան կցորդ անեմ: Ամ-
բողջ Շուշին այժմ կատարեալ սղի մէջ է. Զէք
դտնի մի ընտանիք, որ այս վերջի ամիսներում
գրկված չը լինի իր մի քանի անմեղ երեխաներից
կամ սիրելիներից: Որ թաղով մարդ անցնում է
աղբի ու ողբի ձայն է լսվում, ամեն մի քայլի վրա
մարդ դադար է միայն հանդիպում, ամեն տեղ
միայն ծաղկի մասին են խօսում: Այնտանի թանգու-
թիւնը այժմ մոռացել ենք ու անփախելի ծաղկի
մասին ենք մտածում: Գուցէ ընթերցողը կը մտա-
բերէ անցյալ տարվայ մեր քաղաքի էլի սաստիկ
հիւանդութիւնը՝ կարմուկը և կը հարցնէ ինչու
մեր քաղաքում միշտ տիրում են չարուհակ այսպի-
սի հիւանդութիւններ: Ահա ինչու. Նախ՝ տները
միմեանց վրա այնպէս սուղ դարսված են, որ ոչ
թէ միայն նրանց մէջ իստակ օդ չէ խաղում,
այլ միջի եղած աղակալված և խեղդող ամպս
ձինն անգամ տեղ չունի զուրս գալու և այդ բա-
ւական չէ, մենք էլ արդէն օգուտտօնից ենք ըսկը
սում պատճառների ճեղքերը և ծակուծուկը
ամրացնել, Գեռ փառք Աստուծոյ, որ քաղաքի մի
մասը (հարուստները) բուխարի են վառում, որը
գոնէ, թէ և քիչ էլի փոխում է սենեակի օդը, բայց
երեւակայեցէք, որ այդ բուխարի վառողները
թիւր շատ անշնչն են, իսկ մեծամասնութիւնը բա-
նացնում է երկաթեայ վառարան և ածուխ, որը
առողջներին էլ կարող է մի օրվայ մէջ միւս աշ-
խարհը ճանապարհել: Երկրորդ՝ փողոցների նեղու-
թիւնը և անմարդկութիւնը, առաւել ևս թուրքերի
թաղում, ուր կաշիքի է ասել, որ դեռ Բանաստեղծի
ժամանակվանից մնում է, կարծես, դրանց համար
մի հնութիւն է. Զասէք թէ՛ մեր քաղաքում էր
կայ ոստիկանութիւն կամ կառավարիչ, բայց ինչ
արած, որ նրանք ոչինչ չեն կարող անել մինչև
հասարակութիւնը չօգնէ և չը կատարէ նրանց
կարգադրութիւնները: Երբ մի ժողովուրդ ինքն չէ
զգում, չէ ճանաչում և վերջապէս չէ ցանկանում
հասկանալ և իմանալ իր օգուտները, պէտքերը,
ինչ ան է պատեղ ոստիկանութիւնը: Շուշեցոց
կարծիքով, քնութեան դէմ, ճակատագրի դէմ չէ
կարելի կուսել, Նրանց կարծիքով, Աստուած դիտ-
մամբ է ուղարկում այս ցուրտը և պատճառները
իրենց պատճառը նպատակը, և ուրեմն դրա դէմ
ոչինչ չէ կարելի անել, պէտք է թողնել ճակատա-
գրի կամքին, ինչ նրա համար գրված է, այն էլ
պիտի կատարվի: Եթէ մէկը ցանկանում է տես-
նել և լսել նախ սպաւորմունքներ ու մտտապաշ-
տութիւններ, թող մի քանի օրով չնորհ բերէ մեր
պատական Շուշի:

Մարդիկ վերաբերեալ մի քանի նախապաշար-
մունքներ ևս կը պատմեմ ձեզ և ձեր հետաքրք-
րութիւնը մասամբ կը լցուցանեմ: Մտալի ընկնող-

ները, որոնց տարութիւնը չափազանց է լինում,
սկզբում ուշաթիփ են լինում և եթէ իսկոյն բժշկի
է համուս կամ նրա խորհուրդները չեն լսում,
հէնց շատերը այն ժամանակն են հոգին առնա-
ղում: Պառաւնների խօսքով այս ուշաթիփ լինելը
նշանակում է, որ ծաղիկ մանածողը նրա հետ խօ-
սում է և բաժին է տալիս: Այդ ժամանակը պէտք
է բոլորը միաձայն ասեն. եւրախ ծաղիկ ընկնի
և ամեն մի խօսքի մէջ պէտք է կրկնեն մինչև ծա-
ղիկը տանից զուրս գալը: Եւրիստիճիւնաւ մտա-
լա, ուրիստիճիւնաւ էլ զուրս գայ: Պէտք է եր-
կու ձու հողի մի գաւաթի մէջ դնեն և հիւանդի
անկողնի տակ պահեն, եթէ չար ոտը գալու լինի,
այն ձուանքը իսկոյն պէտք է կտրեն: Հիւանդի
բարձի տակ ամենայն մարդ իր կարողութեան
համեմատ պէտք է զնի գեղեցիկ ծաղիկաւ: Եթէ
և փող, որ հիւանդը առողջանալուց բաժանէ
աղքատներին: Ամենայն դիւրն պէտք է ձէթից
լոյս վառել, իսկ ով ցանկանայ կարող է աւելորդ
և մոմ վառել, իսկ ձէթը դարձեալ անհրաժեշտ է:
Նորապսակներին և երկուստարդներին բոլորովին
անկարելի է հիւանդին այցելել... բժիշկը ան-
կարող է այդ ցավն օգնել կամ թեթեւացնել և
մինչև անգամ անկարելի է այդ հիւանդութեան
մասին նրանից խորհուրդներ հարցնել: Հիւանդի
չորերը և անկողնի անկարելի է փոխել մինչև
լաւանալը, երեսը և ձուները նոյնպէս անկարելի
է լաւանալ: Հիւանդի մայրը ու տատը կամ մօտ
ազգականը պէտք է ամեն օր եկեղեցի գնայ, հի-
ւանդի համար աղօթէ, մոմ վառէ և խաչի կոճակի
ջրից բերի ու հիւանդին խմացնի, ահա այսօրինակ
հազարաւոր նախապաշարմունքներն են պատճառ
որ տասը հիւանդից երեքը չեն առողջանում,
Համարձակ կարելի է ասել, որ այս հիւանդների
մեծ մասը այդ պատճառներին են զոհ գնում:

Եկեղեցուց սառը ջուրը բերում են և հիւանդին
ստիպմամբ խմացնում, հիւանդութիւնը կրնա-
պատկում է և յետոյ գանգատվում են թէ խաչը
չօգնեց: Սաստիկ տարութեան ժամանակն էլ աւելի
են սենեակը տաքացնում և հիւանդին պիտի ծած-
կում ու տաքութիւնը 40 հասցնում և յետոյ յու-
յուսանալով ճանաչում թէ՛ ձէթի ճրագը չօգ-
նեց, չը փրկեց: Սենեակը պիտի ամրացնում են և
չեն թողնում կեղտոտ ու վարակված օդը փոխի:
Միւսներին էլ են վարակում, հիւանդացնում, ու
յետոյ ասում՝ ամեհ նման մեղաւորին դաժանք լսէ
Աստուծ կը լսի, վարդապետն էլ թառավայ,
էնքան դանչանքն ըն անըմ, մին թափուր չըն գա-
լիս, թա բալքամ Աստուծ ուրան զորութիւնը
հասցնելի էս զօռը ցաւան պրծնենք, աղա-
վանք:

Կարող եմ հաւատացնել ձեզ, իմ համաքաղա-
քացիներ, որ ոչ թափուրը մեզ կօղնէ և ոչ ձէթն
ու ջուրը, եթէ մենք ինչպէս կարգն է, այսպէս
մտիկ չը տանք մեր հիւանդներին ու չը լսենք բիշկի-
ներին: Մենք մեր ձեռքը սպանում ենք մեր հի-
ւանդներին և յետոյ ասում ենք թէ մեր աղօթքը
չը լսեց: Ինչ էք կարծում, եթէ թափուր լինէին
զուրս եկած և մի չորս կամ հինգ ժամ գլուխներս
բաց այսպիսի ցուրտ եղանակում ձիւնի մէջ աղ-
թէիք, ծաղիկը կամ միւս հիւանդութիւնները կը
դադարէին թէ՛ կեանքապատկէին: Միթէ այնպէս
էք կարծում թէ մենք այն ջերմեանդութիւնը
ունենք, որ ամեն մեր ուզածը Աստուծ անյա-
պաղ կը լսէ: Բաւական է, որքան մնացինք Ֆա-
նատիկոս և տգէտ, կարծեմ, ժամանակ
է ճանաչել Աստուծուն և երկրպագել նմա
ըստ արժանոյն: Քրիստոս մեզ լոյս և ճշմարտու-
թիւն քարոզեց և ոչ խաւար ու տղիտութիւն:
Հաւատացէք, որ այս մեր արարմունքով կրկին
ենք Քրիստոսին չարաբար ու խաչում:

Ես աւելի մեղադրում եմ մեր քահանաներին,
որոնց պարտքն է թէ եկեղեցում թէ տներում
քարոզել և հակադէմ ժողովրդին ամեն բան:
Նոյնքան էլ մեղադրում եմ և մեր քաղաքի բժիշկ-
ներին, որոնց սեպակ՝ պարտքն է այցելել աղ-
քատների տները, հարկաւոր խորհուրդներ տալ, աշ-
խատել հիւանդութիւնը քաղաքից արժատախիլ
անել, հրապարակական դատախոսութիւններ անել և
այլն: Ենթադրեմք թէ՛ հէնց ծաղիկ համար ճար
չը կայ, ինչպէս ասում են, բայց միթէ չէ կարելի
հիւանդութիւնը թեթեւացնել, կամ միթէ չէ կա-
րելի առողջապահական խորհուրդներ տալ, որ ա-
ռողջն էլ չընկնէ ու իզուր տեղը փչանայ:

Արցախցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԻ

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են, որ ընթերցարանը
դեռ չէ բացվել, որովհետեւ այն առատ տուրքե-
րը, որ ստորագրեցին, դեռ ևս չեն վճարել:

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ. «Անցեալ տարի
պ. Ա. Թ.—հանի ձեռքով ստորագրութիւն բաց-
վեց յօգուտ Վարդապետեան ընկերութեան: Մինչև
այժմ որ և է լրագրի մէջ չը յայտնվեց ոչ ժող-
ված գումարի որքանութիւնը և նրա ուր ուղար-
կելը»:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ այնտեղ եղա-
նակը շատ լաւ է. Զմեռվայ ընթացքում միայն
մի անգամ ձիւն եկաւ, մնացած օրերը սպրդ և
խաղաղ էին:

Մեզ հաղորդում են ԱՍԱԼՔԱԼԱՔԻՑ. «Պ. Հա-
զարապետով «Кавказ» լրագրի № 16-ի մէջ
տպված Ախալքալաքի նամակի մէջ ասում է, որ
ալիւրի պուղը տպտեղ առաջին տեսակը 2 ռ.
20 Կ. արժէ, իսկ երկրորդ տեսակը 1 ռ. 60 Կ.:
Զը գիտենք պարտքը երբ է գրել այդ նամակը,
միայն հարկաւոր ենք համարում ասել, որ այդ
գները երեք ամիս առաջ են եղել, իսկ այժմ ցո-
րենի ալիւրը դուրս է ճարել և եղածն էլ 3
րուբլուց պակաս չէ կարելի գնել, իսկ դարու ա-
լիւրը 2 ռ. 20 Կ. արժէ, Նոյն նամակում պ.
Հազարապետեան ասում է, որ մեր գաւառում
բաւականաչափ հացահատիկներ կան, բայց ինչ
օգուտ, երբ փողը ձեռքերիս մեջ օրերով ալիւր
չենք կարողանում գտնել, էլ չքաւորների մասին
աւելորդ է խօսել»:

Երեկ, յունվարի 31-ին ԹԻՖԼԻՍԻ Ամարային
թատրոնում հայ դերասանական մշտական խումբը
յօգուտ պ. Աւախանցի ներկայացրեց «Մայրաքա-
ղան» հինգ գործողութիւններով և եօթը պատկեր-
ներով դրաման: Ներկայացման մասին կը գրենք
հետեւալ համարներից մէկում:

ԱՍԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ մի
քանի անձինք չըլկայ գիւղերում գաղտնապէս
ցորեն են գնում և գիշերներով փախցնում են Ա-
լեքսանդրապոլ կամ Ղարս:

Մեզ հաղորդում են ԳԱՆՁԱԿԻՑ, որ այնտեղ
առևտուրը ընկած է. Պաշարեղէնների գները ան-
համեմատ բարձր են: Ալիւրի պուղը 2 ռ. 8 Կ.
մինչև 3 ռ. արժէ, բրինձը նոյնպէս, հալած իւղը
16 ռ., գարին 2 ռ., սիմլիւրը 1 ռ. 50 Կ., մսի
Ֆունտը 10 Կ., ձուի հատը 3 Կ.:

Մեզ գրում են ԱՍԱԼՔԱԼԱՔԻՑ, որ բկացաւ
տարածվել և զուխարթների գիւղերում, Հի-
ւանդութեան ելքը բարեյաջող է լինում: Բաղդա-
նովկա գիւղում այդ ցաւին զոհվել են միայն չորս
երեխաներ:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ զեկտեմ-
բերի 23-ին օրիորդաց ուսումնարանի աշակերտու-
հիք երգել են եկեղեցում: Գանձակում դա առա-
ջին անգամն է եղել և հասարակութեան վրա շատ
լաւ տպագորութիւն է գործել:

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ տեղական
թատրոնասէները պ. Ե. Արզումանեանի մասնակ-
ցութեամբ օրերում կը ներկայացնեն «Բուրդի խա-
ղաղողի կեանքը»: Արիողները մտադիր են բարե-
կենդաններին մի քանի ներկայացումներ տալ:

Մեզ հաղորդում են ԲՈՐԺՈՒՄԻՑ, որ յունվարի
23-ին մի 48 տարեկան մարդ հարած ժամանակ
կամեցել է տան երկրորդ յարկի սանդուղտներով
ներքն գնալ: Նրա ոտքը սլելվել է, չորս արշին
բարձրութիւնից գլխի վրա ընկել է սառած գետնի
վրա և մեռել:

ԱՍԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ զու-
խարթները մէջ մի հասարակական վճիռ է կա-
յացել, որ զօրութեամբ արբեցողութեանը վերջ
պէտք է դրվի: Առհասարակ զուխարթները իրանց
հարսանիքների ժամանակ գործ էին ածում 20—40
թուանդ արաղ, իսկ այժմ սրուված է միայն մի
թուանդ գործ գնել:

Մեզ հաղորդում են ԲՈՐԺՈՒՄԻՑ, որ հողը կէս
արշին բարձրութեամբ ձիւնով է ծածկված: Հացի
պուղը 2 ռ. 40 Կ. արժէ, գարին 2 ռ., ձուի հա-
տը 3 Կ., մսի Ֆունտը 12 Կ.:

Վրաց «Իրօքէրա» լրագրի հաղորդում է, որ
տեղական վարչութիւնը քննում է մորե-
խի ոչնչացնելու հարցը: Այդ հարցը քննելու հա-
մար նշանակված մասնագիտով յայտնել է, որ
մորեխի ոչնչացնելու համար հարկաւոր կը լինեն

5,700 բանւորներ 200 օրվայ ընթացքում: Այն
բանւորների վարձը պէտք է գանձարանը տայ, որ
պէտք է 30,000 ռ. ծախսէ:

ԱՍԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ տե-
ղական հասարակութիւնը մտադիր է թողուու-
թիւն խնդրել քաղաքային գումարից 6000 ռուբլ
ծախսել և այդ գումարով կարօտեալների համար
հաց բերել տալ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐԲԱՆԻՍ

Վերջին օրերս գերմանական հասարակու-
թեանից մի քանի նշանաւոր անձինք նամակով
գրմել էին կոմս Մօլտկէին, որպէս զի նա
ազգէ կայսրի վրա փոքրացնել գերմանական
բանակի թիւը: Կոմս Մօլտկէ այդ նամակին
հետեւալ պատասխանը տուեց. «Ո՞վ չէ՛ ան-
կեղծ սրտով ցանկանում տեսնել զինուորական
այն ծանր բեռի թեթեւանալը, որը Գեր-
մանիան, գտնվելով ամենահզօր հարեանների
մէջ, ստիպված է կրել իր ուսերի վրա. այս
ցանկութիւնը օտար չէ՛ ոչ կայսրերին, և ոչ
կառավարութիւններին. բայց սրանից աւելի
բաղդաւոր դրութիւն միայն այն ժամանակ
կարելի է սպասել, երբ բոլոր ազգութիւնները
կը հասնեն այն հասկացողութեանը, թէ ա-
մեն պատերազմ, եթէ մինչև անգամ նա յաղ-
թական էլ լինի, այնու ամենայնիւ նա ազ-
գին թշուառութիւն է պատճառում: Այս
հասկացողութիւնը կայսրի զօրութիւնն էլ
չէ կարող ներշնչել. դա կարող է միայն ա-
ռաջանալ ազգերի ամենալաւ կրօնական և
բարոյական դատախարակութեանից, և դա կա-
րող է միայն արդիւնք լինել համաշխարհային
պատմական դարաւոր զարգացումից, մինչև
որը մեզինք ոչ մէկն էլ կենդանի չէ լինի»:

Բերլինից հաղորդում են «Köln. Zeit.» լը-
րագրին, որ իշխան Բիւմարկ Վարցենից վերա-
դարձաւ: Բերլին, և իջաւ պետական տեսնա-
զարի տանը:

Ասում են, որ երեւի պատահմամբ նա հե-
ռացաւ Բերլինից այն մի և նոյն օրը, երբ պ.
Ուրբի յանձնեց կայսրին իր վերադարձի հա-
ւատարմաթղթերը, և երբ պ. Սաբուրով հա-
սաւ Բերլին և իջաւ ռուսաց դեսպանատանը:
«Köln. Zeit.» լրագրի Բերլինի թղթակիցը
ասում է, որ Կերմանիայի Ռուսաստանի հետ
ունեցած պաշտօնական յարաբերութիւնները
լաւ են:

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի: «Правит.
Вѣстн.» լրագրի հաղորդում է հետեւեալը.
Եունվարի 27—28 գիշերը Ս. Պետերբուրգի
պօլիցիան Վասիլէյսկիի կղզու տներից մէ-
կում գտաւ տպարանական մեքենաներ, շարած
տառեր, «Черный Переделъ» անունով մի
յեղատիպական լրագրի բազմաթիւ տպած
համարներ, մի քանի պուղ տառեր, բնակու-
թեան կեղծ վկայաթղթեր և երեք բեզվիդեր-
ներ, որոնցից երկուքը լքցրած էին: Ծան մէջ
գտնվող անձինքը կալանաւորված են:
10-ի-08, 29 յունվարի (10 փետրվարի):
«Times» լրագրի հաղորդում է հետեւեալը.
Թէ հրանի բրիտանական դեսպանին գրված է
յայտնել պարսից կառավարութեանը, որ Ան-
գլիան ազատում է նրան 1857-ի դաշնա-
դրութեան պատաւորութեանից, որի զօրու-
թեամբ արգելվում էր նրան զրաւել Հնդկաթը:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունվարի: Հաստատ
աղբիւրները արդարաւորում է այն լուրը, որով
Սկօթլէն գլխաւոր հրամանատար է նշանակ-
վում բոլոր այն զօրքերի վրա, որոնք գտն-
վում են տէկիդիների դէմ մղված արշաւան-
քի մէջ: Սկօթլէն ուղևորվում է այնտեղ
փետրվարի սկզբներում:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ